Հավելված 2
2025թ. «01» «21»-ին
Կնքված N ԴՏՊ-1160-11012/ԼԿ-10/25 պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N ԴՏՊ-1160-11012/ԼԿ-10/25

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը՝** | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում. Տաշիր |
| **Դրամաշնորհի N** | N ԴՏՊ-1160-11012/ԼԿ-10/25 |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակատված** | 01.01.2025 – 31.12.2025 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.10.2025 – 31.12.2025 |
| **Ներկայացման օր** | 10.04.2025 |
| **Հաշվետվության պատասխանատու** | Սվետլանա Հարությունյան<br>Ծրագրի համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների շրջանակներում կատարման ենթական գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար**

**Միջոցառում 1.** Շահառուների ընդունելության կազմակերպում բազմամասնագիտական թիմի կողմից, կարիքների բազմակողմանի գնահատում ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ:
**Միջոցառում 2**. Գնահատման արդյունքում սոցիալ-վերականգնողական անհատական և խմբային ծրագրերի կազմում:
**Միջոցառում 3**. Սոցիալ-հոգեբանական վերականգմանն ուղղված ծառայությունների տրամադրում:
**Միջոցառում 4**. Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտություններ զարգացնող խմբակներում:
**Միջոցառում 5.** Հանրային միջոցառումներ և ԶԼՄ լուսաբանում:
**Միջոցառում 6.** Անկախ կյանքի դրական ծնողավարման վերաբերյալ թրեյնինգներ, սեմինարներ երիտասարդների և նրանց ընտանիքների համար:
**Միջոցառում 7.** Իրավաբանական խորհրդատեղեկատվական աջակցություն ընտանիքներին առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ:
**Միջոցառում 9.** Ծրագրի մշտադիտարկում և գնահատում:

2.2 **Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի /Գանտի աղյուսակ/ և միջոցառումներ, նշելով՝ Ձեր կողմից կատարված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:**

**Միջոցառում 1.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 1/ իրականացվել է շահառուների ընդունելության կազմակերպում և բազմամասնագիտական թիմի կողմից կարիքների բազմակողմանի գնահատում՝ ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ, որի արդյունքում իրականացվել է թվով **20** շահառուի կարիքների գնահատում: Գործողությունը 1-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 2**. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 2/ անձի կարիքների բազմակողմանի գնահատման արդյունքում բազմամասնագիտական թիմի կողմից կազմվել է թվով **20** սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր: Գործողություն 2-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 3**. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 3/-ի թվով **20** շահառուի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ խմբային և անհատական պարապմունքների միջոցով, նպատակ հետապնդելով զարգացնել շահառուների մոտ ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման և շարժողական հմտությունները: Գործողություն 3-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 4**. Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտությունների զարգացնող խմբակներում: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են արտթերապևտիկ ուղղությամբ տարբեր խմբակներ, որոնց նպատակն է զարգացնել ստեղծագործական ընդունակությունները, բարձրացնել ինքնագնահատականը, զարգացնել մանր մոտորիկան, զարգացնել թիմում աշխատելու, միմյանց օգնելու կարողությունը: Գործողություն 4-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 5**.

1. 09.03.2025 թ-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի շահառուները այցելել են Տաշիրի մշակույթի տուն, մասնակցել կանանց միամսյակին նվիրված միջոցառմանը: Մասնակիցների թիվ՝ 10:

**Միջոցառում 6.** 27.03.2025 թ-ին կենտրոնի թվով 11 շահառուների և նրանց ընտանիքի անդամների համար կազմակերպվել են հետևյալ սեմինարները՝

1. Թեմա՝ «Երեխա-ծնող կապի ամրապնդում»: Դասընթացը վարեց, կենտրոնի սոցիալական աշխատող՝ Սերինե Ղազարյանը:
2. Աշխատարան՝ «Արտթերապևտիկ աշխատանքը ծնողների հետ»: Աշխատարանը վարեց, հոգեբան՝ Լուսինե Կաֆիյանը:
3. Թեմա՝ «Հատուկ մանկավարժություն, ծնողների ակնկալիքները»: Դասընթացը վարեց, հատուկ մանկավարժ՝ Աննա Պողոսյանը:

**Միջոցառում 7.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 7/ հաշվետու ժամանակահատվածում թվով 5 քաղաքացու տրամադրվել է սոցիալ-իրավական, առողջապահական խնդիրներին առնչվող, պետական հավաստագրով աջակցող սարքեր և պարագաների ձեռք բերման և այլ խնդիրներին վերաբերյալ աջակցություն և խորհրդատվություն: Գործողությունը 7-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 9**. Իրականացվել է գնահատում (ծրագրի 12-րդ ամսվա ավարտին) և գնահատման պատկերը հաստատական դրական է: Իրականացված գնահատման արդյունքում հստակ և պարզ դարձավ, որ ծրագիրը միանշանակ աջակցում է շահառուներին, այդ են վկայում հարցված շահառուների 85 % մոտ արձանագրված կարողությունների և անկախ կյանքի հմտությունների աճը և գոհունակությունը՝ ստացած ծառայություններից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝**

| |
|---|
| Ստորև ներկայացվում է Ստեփանավանի կենտրոնի ամենօրյա աշխատանքները լուսաբանող ֆեյսբուքյան խմբի հղումը՝ https://www.facebook.com/groups/189754026371003 |

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատածում քաղաք դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ չեն առաջացել: |

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար**

| |
|---|
| 30.01.2025թ-ին և 27.02.2025թ-ին «Լիարժեք կյանք» ՀԿ- Տաշիրի կենտրոնի համակարգող՝ Սերինե Ղազարյանը մասնակցել է Միասնական սոցիալական ծառայության Տաշիրի տարածքային կենտրոնի խորհրդի նիստին: |

Ծրագրի համակարգող՝ Ս.Հարությունյան

«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ Ս. Մաղաքյան